

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ՍԻՎԻՏԱՍ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ**

Պ Լ Ա Ն

(2014-2016թթ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
- II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- III. ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԿԵՐ
- IV. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ
- V. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՎԻՏԱՍ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ
- VI. ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- VII. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ
- VIII. ՀԱՎԵԼՎԱԾ 1.

I. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայկական Սիվիտասը ստեղծվել է 2005թ. «Տեղեկատվական պահոցների ավտոմատացման և հետազոտման խումբ» ՀԿ-ի կազմում՝ քաղաքացիական կրթության մի խումբ նվիրյալների կողմից: Այն որպես հասարակական կազմակերպություն գրանցվել է 2011 թվականի օգոստոսին՝ «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» անվանումով (կրճատ՝ Հայկական Սիվիտաս):

Հայկական Սիվիտասը համագործակցում է պետական համապատասխան կառույցների, տեղական և միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտը, Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը, Երևանում ԵԱՀԿ գրասենյակը, Քաունթերփարթ Ինթերնեշնլը, Եվրոպայի պատմաբանների ասոցիացիան և այլն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատելով իր առաքելությանը համապատասխան, Հայկական Սիվիտասը 2008-2013 թվականների ընթացքում վերապատրաստել է ավելի քան 850 ուսուցիչներ, 200-ից ավել դպրոցների տնօրեններ և փոխտնօրեններ, իսկ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում ներգրավել են 15.000-ից ավելի միջին և ավագ դպրոցի աշակերտներ՝ զարգացնելով և ընդլայնելով իրենց գիտելիքներն ու փորձառությունը ժողովրդավարական և մարդու իրավունքի կրթության ոլորտում:

Հայկական Սիվիտասի առանցքային ծրագրերն են՝

- «Քաղաքացի նախագիծ» համայնքային հիմնախնդիրների ուսուցման ծրագիրը.
- «Հասարակագիտության ակտիվ մեթոդներ և բովանդակություն» սեմինարների շարքը.
- «Ակտիվ դպրոց» ուսումնական հաստատությունների վարչական աշխատողների համար նախատեսված սեմինարների շարքը.
- «Ժողովրդավարության հիմնարար արժեքներ» ուսումնական ծրագիրը:

Կազմակերպությունը ներգրավված է նաև համապետական և տեղական ընտրությունների դիտարկման մեջ:

Հայկական Սիվիտասը 2007-2010 թթ. Բաց կրթության կենտրոնի (OEC, Բուլղարիա) Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (FDD, Վրաստան), Քաղաքացիական կրթություն տեղեկատվական և հետազոտական կենտրոնի (Ղազախստան), Մոնղոլիայի քաղաքացիության կրթության կենտրոնի (MCCE), Սիվիտաս - Ռուսաստանի, ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի կրթության դեպարտամենտի, Ամերիկյան ուսուցիչների հիմնադրամի (AFT). Քաղաքացիական կրթության կենտրոնի (ԱՄՆ) և Ռասել Սեյջ Քոլեջի Քաղաքացիական կրթության խորհրդի (ԱՄՆ) հետ համատեղ իրականացրել է «Քաղաքացիական կրթության խճանկար՝ մեր աշխարհի քաղաքական խնդիրները» միջազգային կրթական փոխանակման ծրագիրը:

2006 թվականից կազմակերպությունը մասնակցում է Քաղաքացիական կրթության համաշխարհային կոնգրեսին՝ ոլորտի ամենախոշոր միջազգային միջոցառմանը, որտեղ Հայկական Սիվիտասի ներկայացուցիչները ներկայացրել են Հայաստանի լավագույն փորձը:

Հայկական Սիվիտասի անդամներն ակտիվ մասնակցություն և զգալի ներդրում են ունեցել Հայաստանում հասարակագիտության հանրակրթական ուսումնական ծրագրերի, քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության դասագրքերի, ուսուցչի ձեռնարկների, գնահատման ուղեցույցերի մշակման և տարածման աշխատանքներում: Կազմակերպությունն աջակցում է նաև ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի «Մարդ և հասարակություն» հասարակագիտական հետազոտությունների ամսագրին՝ տրամադրելով հոդվածներ, ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբերյալ փորձարկվող դասերի պլաններ և այլ ուսումնական նյութեր:

III. ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԿԵՐ

Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ հասարակական կազմակերպությունը ժողովրդավարական և մարդու իրավունքների կրթության ոլորտում գործող ամենաազդեցիկ և պատասխանատու կառույցներից է:

IV. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ

Կազմակերպության առաքելությունն է.

Նպաստել ժողովրդավարակն սկզբունքներով և արժեքներով առաջնորդվող պատասխանատու, իրազեկ և ակտիվ քաղաքացիների ձևավորմանը, քաղաքացիական հասարակության զարգացմանն ու կայացմանը:

Կազմակերպության արժեքներն են՝

- ա) Արդարությունը, իրավահավասարությունը և իրավունքի գերակայությունը,
- բ) Հայրենասիրությունը և համընդհանուր բարիքի նպաստումը,
- գ) Բաց մտածողությունը և բազմակարծությունը,
- դ) Մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները,
- ե) Խիզախությունը և ազնվությունը:

**V. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՎԻՏԱՍ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ**

**ՆՊԱՏԱԿ 1. Ժողովրդավարական կրթության և մարդու իրավունքների կրթության
զարգացում:**

**Խնդիր 1.1. Ժողովրդավարական կրթության ոլորտում հանրային քաղաքականության
բարելավում:**

Գործողություն 1.1.1.

Կազմակերպությունը փոխըմբռնման հուշագիր կկնքի ՀՀ Կրթության և գիտության
նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի հետ:

Ժամանակահատված - 2014-թ.

Պատասանատու – Գործադիր տնօրեն

Գործողություն 1.1.2.

Ժողովրդավարական և մարդու իրավունքի կրթության (ԺԿՄԻԿ) իրավիճակի
վերլուծություն:

Ժամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու - Խորհրդի նախագահ, խորհրդի անդամներ

Գործողություն 1.1.3

Կազմակերպությունը կմշակի և կկազմի ԺՄԻԿ հայեցակարգ:

Ժամանակահատված - 2014-2015թթ.

Պատասխանատու - Խորհրդի նախագահ, խորհրդի անդամներ

Գործողություն 1.1.4

Առաջարկություններ ներկայացնել ավագ դպրոցի չափորոշիչներում ԺԿՄԻԿ-ի
բարելավմանը:

Ժամանակահատված - 2014թ.

*Պատասխանատու – Գործադիր տնօրեն և խորհրդի անդամներ Կարինե
Հարությունյան, Արմինե Բվանյան*

Գործողություն- 1.1.5

Առաջարկություն ներկայացնել ատեստավորման գործընթացում ԺՄԻԿ փաթեթի
ապահովման համար:

Ժամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու - Խորհրդի նախագահ, խորհրդի անդամներ

**Խնդիր 1.2. Իշխանության մարմինների և դպրոցների ԺՄԻԿ ծրագրեր իրականացնելու
կարողությունների զարգացում:**

Գործողություն-1.2.1

ԺՄԻԿ-աջակցության կենտրոնի հիմնում ՀԿ և կրթության կառավարման լիազոր
մարմինների կողմից:

Ճամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու - Խորհրդի նախագահ, խորհուրդ

Գործողություն- 1.2.2

Մշակել և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ՀՀ-ում քաղաքացիական առաջնորդության զարգացմանը

Ճամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու - Խորհրդի նախագահ, խորհուրդ

Գործողություն 1.2.3

Մանկավարժական ԲՈՒՀ-երում ԺՄԻԿ-ի ծրագրերի ներդրում և զարգացում:

Ճամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու – Խորհուրդ և գործադիր մարմին

Գործողություն 1.2.4

«Քաղաքացի նախագիծ» և ժողովրդավարության հիմնարար արժեքներ ծրագրերի ընդլայնում և տարածում կրտսեր, միջին և ավագ դպրոցներում:

Ճամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու – Խորհուրդ և գործադիր մարմին

Խնդիր 1.3 Հանրակրթական հաստատությունների ժողովրդավարական կառավարման մոդելի մշակում և տարածում:

Գործողություն 1.3.1

«Ժողովրդավարական դպրոց» մոդելի մշակում և փորձարկում հանրակրթական դպրոցներում:

Ճամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու - Խորհրդի նախագահ, խորհուրդ

Ակնկալվող արդյունքները

Ժողովրդավարական և Մարդու իրավունքների կրթության արդյունավետ համակարգ, ոլորտի պատասխանատուների բարձր պատասխանատվություն և ԺՄԻԿ խթանող միջավայր;

ԼՊԱՏԱԿ 2. Քաղաքացիական հասարակության զարգացման նպաստում

Խնդիր 2.1. Քաղաքացիական հասարակության զարգացում:

Գործողություն 2.1.1.

Քաղաքացիական հասարակության ցանցերի խթանման ծրագրերի իրականացում:

Ճամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու – Գործադիր տնօրեն

Գործողություն 2.1.2

Քաղաքացիական գիտակցության բարձրացմանն ուղղված հանրային իրազեկման միջոցառումների իրականացում:

Ճամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու – Գործադիր տնօրեն

2.1.3 Աշակերտական ինքնակառավարման մարմինների գործողությունների խթանում, քաղաքացիական կրթության ծրագրերի իրականացում:

Ժամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու – Գործադիր տնօրեն

Խնդիր 2.2. Համապետական և տեղական մակարդակներում ընտրական իրավունքի իրացում և մոնիթորինգ:

Գործողություն 2.2.1

Ընտրական իրավունքի կրթական ծրագրերի իրականացում ավագ դպրոցներում և ԲՈՒՀ-երում:

Ժամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու – Գործադիր տնօրեն

Գործողություն 2.2.2

Աշակերտական ինքնակառավարման կառույցների ձևավորման նպաստում

Ժամանակահատված - 2014-2016թթ.

Պատասխանատու – Գործադիր տնօրեն

Ակնկալվող արդյունքները

Քաղաքացիական հասարակության ճիշտ ընկալում մարդկանց կողմից, ակտիվ և ինքնակառավարվող քաղաքացիական հասարակություն, իրազեկ ընտրող և առավել թափանցիկ ընտրական համակարգ

VI. Կանխատեսումներ

- ՀՀ քաղաքացիական հասարակությունը կայացման փուլում է գտնվում և փորձում է հանրային կյանքի բոլոր ոլորտներում որակական փոփոխությունների հասնել: Երկրում իրականացվում են նաև կրթական ոլորտի բարեփոխումներ:
- Եվրոինտեգրման գործընթացը հրամայական է դարձնում մարդու իրավունքների և ժողովրդավարության արժեքներով առաջնորդվող կրթական արդյունավետ համակարգի ստեղծումը:
- Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՄԻՎԻՏԱՍ հասարակական կազմակերպությունը հանդիսանում է հանրակրթության բարեփոխման ոլորտում հեղինակություն և վստահություն ձեռք բերած ճանաչված հասարակական կազմակերպություններից մեկը:
- ՀՀ հանրային իրավասու մարմինները նպաստում են Հայկական Միվիտասի գործունեության իրականացմանը:
- Կազմակերպությունը ներկայումս համագործակցում է հետաքրքրված միջազգային դոնոր և գործընկեր կազմակերպությունների հետ:

VII. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՄԻՎԻՏԱՍ հասարակական կազմակերպության ռազմավարական պլանում նշված ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման ընդհանուր մշտադիտարկումը կիրականացնի Հայկական Սիվիտասի գործադիր տնօրենը՝ սերտորեն համագործակցելով կազմակերպության մոնիտորինգի և գնահատման հարցերով զբաղվող տարբերի ծրագրերի, ռազմավարական ուղղությունների պատասխանատուների հետ, հիմնվելով գործողությունների պլանի, աշխատանքային պլանների և իրականացվող ծրագրերի ուսումնասիրության վրա: Հայկական Սիվիտասի 2014-2016 թվականների ռազմավարական պլանի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու համար կազմակերպության անդամների կողմից կիրականացվի ռազմավարական պլանի վերանայման և Հայկական Սիվիտասի գործունեության ինքնագնահատման ամենամյա սեմինարներ, որոնց հիման վրա վերանայված ռազմավարական պլանը կտեղադրվի Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՄԻՎԻՏԱՍ-ի պաշտոնական վեբ կայքում:

VIII.

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Հավելվածի մեջ գրվում են առկա շարադրանքի հետ կապված անհրաժեշտ պարզաբանումներ, կազմակերպության գործունեությանն առնչվող տարբեր տեղեկություններ և արձագանքներ

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

Նշվում են միջազգային և ազգային օրենսդրության հետ առնչվող հիմնավորումներ

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

Կարող են տարբեր տեսակի տեղեկատվություն և պատկերներ, գրաֆիկներ, գծապատկերներ և այլն